

## Արձանագրություն 12

2022 թվականի մայիսի 13-ին ժամը 14:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղի Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի արտահերթ նիստ: Նիստին մասնակցում էին միացյալ խորհրդի ձայնի իրավունք ունեցող 9 /ինն/ անդամներից՝ 8 /ութ/ անդամները:

Նիստը վարում է միացյալ խորհրդի նախագահ Անժելա Մալխասյանը, առանց ձայնի իրավունքի արձանագրում և ձայնագրում է միացյալ խորհրդի քարտուղար Ռուզաննա Գաբրիելյանը:

Նիստին մասնակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչ Լիաննա Մկրտչյանը:

### Օրակարգում

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թեկնածու Արմինե Առաքելյանի կողմից ներկայացված ծրագրի քննարկում:

/Զեկ.՝ միացյալ խորհրդի նախագահ՝ Ա. Մալխասյան/

2. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ընտրություն:

/Զեկ.՝ միացյալ խորհրդի նախագահ՝ Ա. Մալխասյան/

Լսեցին. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղի Ա.

Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի նախագահ՝ Ա. Մալխասյանին:

Զեկուցողը նշեց, որ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2022 թվականի մարտի 18-ից հայտարարված մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ հավակնորդ՝ Արմինե Աղասու Առաքելյանը:

Տնօրենի հավակնորդ՝ Արմինե Աղասու Առաքելյանը և բանավոր և գրավոր տեղեկացրել է, որ այսօր չի կարող մասնակցել հայտարարված մրցույթին՝ վատառողջ լինելու պատճառով:

#### Որոշում է՝

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մայիսի 13-ի /տասներեքի/ մրցույթը համարել չկայացած հավակնորդի չներկայանալու պատճառով

2. Հանձնարարել միացյալ խորհրդի նախագահ Ա. Մալխասյանին.

Տնօրենի ընտրության արդյունքների մասին մրցույթի օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝ ներկայացնելով նիստի արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի եզրակացությունը:

Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի

միացյալ խորհրդի նախագահ՝  /Ա. Մալխասյան/

միացյալ խորհրդի քարտուղար՝  /Ռ. Գաբրիելյան/